

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1953 — 1954 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Կերպարանի Տեղապահ Սրբազան Հայր,
Հոգեւորանոցի Հայրեր,
եւ Յարգելի Հանդիսակազմներ

Գնահատելու Աստուծոյ որ անգամ մը ևս կը փակենք մեր զպրօջական տարին որոշ արդիւնքներով, հակառակ մեր քաղաքի տնտեսական ու քաղաքական աննպաստ պայմաններուն:

Թիւ աշակերտութեան. — Անցեալ տարւոյ Հոկտեմբերի սկիզբը վերաբացուեցաւ մեր վարժարանը 500 երկսեռ աշակերտներով՝ որոնց 250ը նստեկեցան նախակրթարանի, իսկ 250ը մանկապարտէզի դասընթացներուն:

Պաշտօնէութիւն եւ Ուսուցչական կազմ. — Մեզի՛ իրրե վարժարանի տեսչի վստահուած կրթիկներ գործը, այս տարի, վարեցինք օժանդակ ունենալով 23 ուսուցիչ-ուսուցչուհիներու խումբ մը: Անոնց չորսը Ս. Յակոբեանց Միաբանութեան վարդապետ հայրերէն էին. որոնք պաշտօնավարեցին անվարձ և եռանդով աշխատութեամբ, իսկ մնացեալ 8ը ուսուցիչներ և 11 ուսուցչուհիներ են: Ուսուցչուհիներէն 5ը կը պաշտօնավարեն մանկապարտէզի բաժնին մէջ զլիստորութեամբ քաղմամբայ և արդիւնաշատ Մանկապարտէզականուհի Օր. Տիգրանուհի Նալպետեանի:

Մեր նախակրթարանի ուսուցչական կազմին վրայ ունեցած ենք երկու ուսուցիչներու յաւելում Պր. Խուրի Եէրասիմօս, որ մեր բարձրագոյն դասարաններուն կը զասաւանդէ բնագիտութիւն և քիմիաբանութիւն իսկ Պր. Եղուարդ Միշէլ զարմեալ բարձրագոյն դասարաններու Փրանսերէն: Երկուքն ալ քաղմամբայ և փորձ ուսուցիչներ են, որոնք նոյն ատեն կը զասաւանդեն քաղաքի սօտար կարևոր գոյէճներու մէջ:

Ի որուն կ'զուսնակութեամբ միայն կ'անդրադառնամ որ 23 հոգիներու ուսուցչական մեր կազմը պատրաստակամութեամբ, եռանդով նուիրումով սատարեց մեր կրթական գործին, ու այս առթիւ իրենց ունիւմ միայն շնորհակալութեան պարտք:

Կրթական մակարդակ եւ ոգի. — Ինչպէս անցեալ տարւոյ մեր տեղեկագրով յայտարարած էինք, տարւոյս սկիզբը մեր նախակրթարանի վեց դասարաններուն վրայ անկցուցինք երկրորդական վարժարաններու յատուկ 7րդ նոր դասարան մը: Իսկ յառաջիկայ տարեմուտին աւելցած պիտի ունենանք 8րդ դասարան մը որուն համար արդէն իսկ ստացած ենք անհրա-


ձեշտ արտօնութիւնը Ս. Աթոռոյս Գեր. Տեղապահ Սրբազանէն: Ինչպէս տեղեկագրած էինք անցեալ տարի, սոյն դասարաններու յաւելումը կը կատարուի իրրե տեսակ մը գոհացումը այն փափաքներուն որ ունեցած էին մասնաւորապէս վարժարանիս բոլոր նախորդ տեսուչները, և ընդհանրապէս մեր զաղութը, ունենալ մեր նախակրթարանին քօնը ի վեր երկրորդական կարգեր, Գաղութանայ ազգապահպանման զօրաւոր ազգակներէն մին կը հանդիսանան մեր ազգային երկրորդական վարժարանները. ուր նախակրթարանային ուսումէ մը վերջ հայ աշակերտը իր լիւր ու հարազատօրէն հայեցի դաստիարակութիւնը պիտի ստանայ շատ աւելի զիտակից ու հասուն տարիքով և ըմբռնողութեամբ: Իսկ ինչ որ ասկէ անդին մեզի խթան կ'ըլլայ դասարանային այս նոր յաւելումներուն, Նրուսաւդէմի սօտար վարժարաններու տարագրական հոգութիւնն ու շնչուած օտարութիւնն է. այս պայմաններու տակ մեր շատ մը աշակերտները աւարտելէ յետոյ մեր նախակրթարանը կը մնային երկրորդական դաստիարակութեան զուրկ: Նոր այս դասարաններու յաւելումը պայմանաւոր դարձանը պիտի ըլլայ մեր զաղութէն ներս կըրթական այդ պահանջին:

Գալով մեր վարժարանի կրթական մակարդակին, ուշադրութեամբ նստեկեցանք մանկապարտէզի ամենէն փոքրէն մինչև երկրորդական Ա. բոլոր դասարաններուն բոլոր դասաւանդութիւններուն, և աշխատեցանք որքան կարելի է իրագործել կրթական մակարդակի առաւել յառաջդիմութիւն: Ճիշդ ըրինք որպէսզի անցեալ տարիէն սկսուած մանկապարտէզի Մաղիկ դասարանի անգլիներէնի և արարներէնի ուսուցումը ունենայ նախորդ տարիէն աւելի նուաճում մը, ինչ որ եղած իսկ է: Իսկ Մաղիկ դասարանի ընդհանուր ուսման մակարդակը աշխատեցանք որ հաւասարի նախակրթարանային առաջին դասարանի մակարդակին ու տուաւ գոհացուցիչ արդիւնք: Ճիշդ ըրինք որ նոյն համեմատութեամբ յառաջդիմութիւն կատարուի նաև նախակրթարանի բոլոր դասարաններուն մէջ. իսկ մեր 7րդ նոր դասարանի ուսման մակարդակը հաւասար եղաւ սօտար երկրորդական վարժարաններու երկրորդ (Սէքունտ Սէքունտէրի) դասարանի ուսման մակարդակին: Մեր վարժարանէն ներս այս տարի ևս աւանդուեցան 4 լեզուներ, Հայերէն (Գրաբար և Աշխարհաբար), Անգլերէն, Ֆրանսերէն և Արաբերէն:

Դարձանելու համար սօտար լեզուներու խօսակցական վարժութեան թերին, բարձրագոյն

դասարաններուն համար ունեցանք ծագումով 3 օտար ուսուցիչներ ֆրանսերէնի, արաբերէնի և գիտական դասերու համար, որոնք չեն գիտեր հայերէն ու կը զսասուանդեն իրենց դասին առարկայ լեզուներով միայն: Իսկ զբոսապահութուն բարձրագոյն դասարանի աշակերտներուն ոչ միայն պարտադրեցինք այլ և ուշադիր եղանք որ խօսին արաբերէն և անգլերէն:

Ասանց վարանելու կը վկայեմ թէ չորս լեզուներու մէջ ալ այս տարի վարժարանս արժանազրած է կարևոր նուաճումներ, ու այս թափով շարունակուած մենք յառաջիկային պիտի ունենանք շատ աչքառու արդիւնաւորութիւն եթէ Տէրը կամենայ: Գիտական, մաթեմատիք, և մասնաւորապէս հայագիտական դասերը աւելորդացան նոյնպէս շատ խնամքով և ժամանակացուցային կանոնաւորութեամբ և անթերիութեամբ: Տարւոյս ընթացքին ձեռնարկեցինք նաև տարբարածարանի մը կազմութեան: Ինչ որ ունեցանք այս տարի կ'առաջադրենք նետզնետէ կատարելագործել յառաջիկային:



ՍՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆԱՅ ՎԱՐՄԱՐԱՆ

Այս դասաւանդութիւններուն կետ աղջիկներուն համար ունեցանք նաև ձեռագործային աշխատանքներու օրական պահ մը: Այս մարդին մէջ ևս ունեցանք խնամուած և հաշկաւոր գործերու արդիւնք մը որ արժանացաւ մեր տարեկան շտապարին օրը այցելուներու ջերմ գնահատանքին:

Իմացական, ուսումնական մեր այս մտահոգութիւններու քովք ի վեր շատ աւելիով կարեւորութիւն տուինք ոգեկանին, օժտելու համար մեր տղաքը կրօնական և հայեցի առողջ ոգիով

մը: Ըստ նախընթացի առաջնորդեցինք զիրենք կանոնաւորաբար ամէն կիրակի ղէպի Ս. Եկեղեցի: Ս. Զատիկի և Ս. Ննդեղան տօներու առիթով ոչ միայն մեր այլ նաև օտար երկրորդական վարժարաններու հայ աշակերտները մեր հրաւերին վրայ մասնակից եղան Ս. Հաղորդութեան խորհուրդին: Վերջապէս մեր դասախօսութիւններով վարժարանիս շնչուած կրօնական - ազգային շունչով կրնանք ըսել թէ մեր մը փոխանցած եղանքը տղոց մեր ազգային ոգեկանութիւնն է:

Ուրախ ենք ըսելու թէ այս ուղղութեամբ մեր ճիգերը չեն մնացած ապարդիւն և մեր զպրոցէն մեկնող բոլոր աշակերտներն ալ եղած են իրենց նկարագրով, վարքով ու բարքով, վարժարանիս պատիւ բերող անձնաւորութիւններ:

Ս. Թարգմանչաց Ծրանաւարից Միւսրիւն. — Մեր կրթական գործին զուգընթաց մեր նախկին շրջանաւարտներու այս պատուական Միւսրիւնը կ'ընէ իր կարելին շրջանաւարտ հայ երկեսու երկտասարդներուն մէջ վառ պահելու համար վարժարանէս շամբուած կրօնական - ազգային ոգին: Ունին իրենց վարչութիւնը որ համարալիս ու միակամ աշխատանքով կ'ընէ իր կարելին կազմակերպելով ամէն կիրակի դասախօսութիւններ, ընկերային հաւաքոյթներ, ննարկատեղան վայրերու այցելութիւններ, զբոսապատումներ, և այլն: Իսկ իրենց նիւթական տկար պայմաններու ներքաժ չափով կ'օգնեն նաև կարօտ ուսանողներու: Հայթայիթով գրեական պիտոյք և այլն: Իրենց համար ունիմ միայն գնահատական խօսք:

Մարգալան կեանք. — Վարժարանիս մարգանքի ուսուցիչ Գր. Խաչատուր Խաչատուրեանի ղեկավարութեամբ մեր աշակերտները բաժնուած կորիւն, Ազատ և Մարիս երեք մարզական խումբերու, ունեցան մարզական խանդավառ կեանք մը: Ամէն առաւօտ առողջապահութեան անհրաժեշտ շուէտական մարզանքի փորձերէն զատ աճող ունեցան ֆութպոլի, պասքէթպոլի, փինկ փոնկի և լիդիպոլի վարժութիւններ, և մրցումներ օտար վարժարաններու դէմ, նետեկայ արդիւնքներով. — 7ը պասքէթպոլի մրցումներէն՝ 5ը ի նպաստ վարժարանիս, 6 փոլիպոլի մրցումներէն՝ 4ը ի նպաստ վարժարանիս, 14 ֆութպոլի մրցումներէն՝ 11ը ի նպաստ վարժարանիս, 3 փինկփոնկի մրցումներէն՝ 2ը ի նպաստ վարժարանիս:

Աղջիկներու մարզական կեանքը պէտք եղած թափով առաջ տանելու համար անհրաժեշտօրէն պէտք ունինք անոնց յատուկ մարզանքի ուսուցչի մը, ինչ որ կը պահի ներկայիս մեր քաղաքին մէջ: Աղջիկները ևս բաժնուած երեք մարզական խումբերու, բարձրագոյն դասարաններէն տասնապետ երեք աշակերտուհիներու առաջնորդութեամբ ունեցան շուէտական մարզանքի և լախտախաղի վարժութիւններ:

10 Յունիսին ի ներկայութեան իրենց ծնողքներուն վարժարանիս երկեսու ուսանողութիւնը

ունեցաւ իր մարզահանդէս - մրցումը: Իսկ 13 Յունիսին տեղի ունեցաւ վարժարանին տարեկան զարտահանդէսը ուր մեր վարժարանի երկուսն աչակերտութիւնը իրենց մարզական կեանքի լաւագոյն ճիգերը ի յայտ բերին զանազան սպորտային խաղերով: Դարտահանդէսին ներառուած էին նաև ստար հրաւիրեալներ, կրօնական պետեր և ժողովուրդի հոծ բաղձութիւն:

Սկստական շարժում. — Թէ ազգկանց և թէ սոցց յատուկ սկստական մեր շարժումը կ'ընթանայ բնականօրէն: Անոնք ասին շարժ կ'ուսնեան իրենց զաստատութիւններն ու խաղերը: Արեւելեան առաջնորդն է Պր. Ի. Խաչատուրեան: Իսկ զայլիկներունը Պր. Գրիգոր կիւլէմէրեան: Տարույս ընթացքին մեր արիւններու թիւը չափաւ 30 ի, իսկ զայլիկներու թիւը 60 ի:

Արեւուշներու ընդհանուր առաջնորդն է Սր. Ազիւ Եղապեան, իրեն սօմաղակ ունենալով մեր վարժարանէն նախկին կարգ մը շրջանաւարտ սօմաղակներ: Արեւուշներու թիւն է 40 իսկ արձակներունը զարձեալ 40:

Տեսնական. — Վարժարանին ամենէն անմիթբարկան պարագան է իր տնտեսական դրուածիւնը: Յայտնի է բոլորին Երուսաղէմի տնտեսական և քաղաքական վասթար դրուածիւնը որուն նետանքով հազիւ մեզի կարելի կ'ըլլայ մեր 500 աշակերտներէն 600 տինարի գումար մը տանալ իրրև տարեվար: Անոնց գրեթէ 300ը նիթապէս անբաւարար ձեողքներու զաւակներն և նետարար շին վճարի: 185 տինարի մուտք մը ալ ունեցած ենք մեր տարեկան ազազարձէն: Մինչ մեր տարեկան ծախքն է 2500 տինար: Հեանարար բայց մը կայ որ կը ծանրանայ մեր Ս. Աթոռի ուսերուն:

Բոլորին համար յստակ է թէ այս բացը որքան ծանր բեռ մըն է այս օրերուն Ս. Աթոռին, որ զկուած իր կալուածներու հաստիթներէն կը բուարարուի նպատակներով և նուիրակութեամբ ձեռք բերուած գումարներով: Հետևարար խղճի պարտականութիւն է մեզ համար զանազան միջոցներով, որքան կարելի է թեթև ցնել այս բեռը:

Այս ուղղութեամբ ունեցանք բազմաթիւ թղթակցութիւններ որոնց արդիւնքը եղաւ բաւական արտապնդիչ վարժարանին ապաւովելով նետեալ տարեկան նուիրատուութիւնները:

Լոնտոնէ Տիար Երեմէս Գ. կիւլպէնկեան	տարեկան	1000 տոլար
Ամերիկայէն Վարզանանց Ասպետներու Եղբայրակցութիւն	տարեկան	1000 »
Լոս-Անճէլոսէն Հայ կրթական Հիմնարկութիւն	տարեկան	1000 »
Նիւ-Եօրքէն Սերաստահայոց վերաշինաց Միութիւն	տարեկան	400 »
Անթապոյններու Հայրենակցական Միութիւն		150 տոլար

Ունեցած ենք նաև նետեալ պատահական նուէրները. —

Չեռամը՝ Պր. Մանուկ Սյահնեանի (Արիզոնայի Հայ գաղութէն)	170 տոլար
Ամերիկայէն Տիար Փիլիպոսեանէ	100 »
Մեարոպ վարդապետ Աէմէրեանէ	10 »
Ամերիկայի Հայ Ուսանողներու Բարեկամներէն	400 »

Ոոյն նուէրները անշուշտ պիտի փակէին մեր պիտանէի բացը, և սակայն Գեր. Տեղապահ Սերբազան Հայրը և Պատ. Տնօրէն Ժողովը տարուած գերազանց ժողովրդասիրութեան զգացումներով, մեր առաջարկին ընթացք տալով, արտօնեցին մեզ սոյն գումարները նախկինով վարժարանէն ներս եօթներորդ և ութներորդ նոր դասարաններու կազմակերպումին, անշուշտ նըկատի առած պարագան խեղճ ընտանիքներու զաւակներուն որոնք մեր նախակրթարանը աւարտելէ ետք նիւթական անբաւարարութեան պատճառով կը մնան անուսմունք:

Կարգադրութիւն մըն է եղածը որ կը զուգարկի մեր տնտեսական դժբախտ օրերուն, կարգադրութիւն մը որով վարժարանս զարձեալ կ'ունենայ պիտանէի որոշ բաց մը, բայց կը զգանք թէ Չեռոյ Սերբազնութիւնը և Պատ. Տնօրէն Ժողովը անսաւով իրենց խղճի ձայնին նախընտրեցին կարօտ հայ մանուկներու հայեցի մաքուր դաստիարակութիւնը աւելի քան նիւթական բուարարութիւնը: Ու սա պահուել Ս. Հայր, ի դիմաց իմ 500 սաներուն և անոնց ձեողքներուն կուզամ յայտնել իմ երախտագիտութեան ամենախոր զգացումները Չեռի ու Չեռովի զիտաբուռուած Ս. Յակոբեանց Միաբանութեան, այն սրբտաղին հաւաստումով թէ մենք երբեք պիտի չը մոռնանք Չեռ այնքան մեծ զոհարերութիւնը մեր կրթական գործին, մանաւանդ այս օրերուն:

Շնորհակալութեան արտապնդ զգացումներ ունինք մեր բարեբարներէն Տիար Երեմէս Գ. կիւլպէնկեանին, շատ պատուական ու հարազատ հայրորդի մը. ահա ինչ որ մեր միակ տպաւորութիւնը եղաւ շարք մը այն գեղեցիկ նամակներէն ուղղուած Չեռոյ Սերբազնութեան և կամ մեզի ուր կը ցցուար համեստ, բարի, ազգանուէր, կըրք թանուէր, մեծ հոգիի մը տիպարը: Ինչու թէ որպէս բարեբարը կրթական ու ազգային շատ մը ձեռնարկներու: Հիմա անոնց կուգայ աւելնալ նորը իբրև բարեբար Ս. Թարգմանչաց վարժարանին: Այսպէս հանդիսանալով կիւլպէնկեան Տան հարազատ ժառանգորդը ու հաւատարմը այդ Տունին ազգանուէր ասնորութեանց:

Մեր և մեր սաներու շնորհակալութիւնները վարզանանց Ասպետներու Եղբայրակցութեան, թէ անուշով և թէ սրտով այս ազնուական Ասպետները մեր օգնութեան կոչներու առջև չի գոցեցին իրենց սրտին զանբը իբրև զրական ապացոյց իրենց ազնուական և վեճ սկզբունքներուն:

Շնորհակալութիւններ իս - Անճէլոսի Հայ Կրթական Հիմնարկութեան: Ազգանուէր այս կազմակերպութեան մասին արդէն լայն տեղեկութիւններ տրուած էին մեր կողմէ տարւոյս անցեալ ամիսներու Սիոնի էջերէն: Վեց պատուական հայերէ կազմուած այս Հիմնարկութիւնը իր գոյութեան երեք տարիներու ընթացքին օժանդակած է Ամերիկայէն զուրս Սփիւսքի հայ զարոյցներուն 70.000 տոլարով, ու անոնց կարգին շնն մտացած նաև մերքը: Իսկ իրենց ձեռնարկին հասոյթը արդիւնքն է միայն իրենց քրտնաջան ու կրթանուէր աշխատանքին ու իրենց անձնական նուիրատուութիւններուն: Կ'արժէր որ կրթանուէր այս ձեռնարկը գտնէր մերայիններուն լայն աջակցութիւնը:

Շնորհակալութեան պարտք ունինք Սերաստանայերու Վերաշինաց Միութեան: Միութիւն մը որ այնքան եռանդազին փարուսով կը նշնի վաս պահել իրենց նահապետական քաղաքի ազդաշէն ու կրթանուէր անձնութիւնները: Այս երկրորդ տարին է որ Վերաշինացը կ'օժանդակէ մեր վարժարանին 400ական տոլարով, ոչ միայն իրրև արդիւնք իրենց կրթասէր ծառայութիւններուն, այլ միևնոյն ատեն իրրև փաստ մը իրենց տածած սիրոյն հանդէպ Սրբոց Յակոբեանց զարաւոր մեր Հաստատութեան:

Մեր շնորհակալութիւնները Ամերիկահայ Տիար Մոսէս Մոսէսեանի ջանքերով կազմակերպուած Հայ Ուսանողներու Օժանդակ Ամերիկահայ կազմակերպութեան, որ Սուրբոյ և Լիբանանի զըզրոցներու կարգին, նաև մեր վարժարանին կ'օժանդակէ նոպաով կրթական ծախքը 20 կարօտ ուսանողներու:

Գարննայ շնորհակալութիւններ Ամերիկահայ Այնթապցիներու Հայրենակցական Միութեան, Արիզոնայի Հայ գաղութին, Տիար Փիլիպոսեանին, Տիար Մանուկ Սվանեանին, Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Աէմէրնեանին, որոնք իրենց արգար աշխատանքին համատարաբար բերին մեր կըրթական գործին:

Շնորհակալութիւններ Սերաստանայ Ամերիկարևակ Տիար Մեսրոպ Պանագեանին, և մեր վարժարանի նախկին սաներէն Տիար Միսիթար Գարիկեանին, որոնք հակառակ իրենց աշխատանքներով բեռնաւորուած ժամանակին, իրենց տքնաջան ճիշդ խառնեցին մերինին, որպէսզի բարեբարութի մեր Հաստատութիւնը նրթապէս, ապահովելով կարգ մը նուիրատուութիւնները:

Շնորհակալութեան պարտք ունիմ նմանապէս տեղւոյս ՈՒՆԻՈՒՍԻ վարչութեան, որ իր նպաստներով սատարեց մեր կրթական գործին:

Այս բոլորէն յետոյ, չեմ գիտեր թէ ինչպէս կրնամ արտայայտել մեր երախտագիտութիւնը Ձեր իսկ Սրբազնութեան նկատմամբ, որուն միայն ու միայն կը պարտինք մեր զարոյցական

համեստ յաջողութիւնները: Այստեղ ինձի կը պակսին բառեր Սրբազան Հայր, փոխարինելու համար Ձեր բարձր հովանաւորութիւնը որ քահանայր եղաւ մեզ մեր կրթական գործին մէջ: Առանց Ձեզի մեր գործունէութեան մէջ շատ բան կը մնար թերի: Ամէն անգամ որ զարոյցական գործով ամբ առինք Ձեր տան սեմին, մենք գտանք կրթանուէր փայտ և լայն օժանդակութիւն: Հակառակ Ձեր բազմազգիտի և ծանր մտազրազուսներու եղաք մտար մեր կրթական գործին, ըրիք Ձեր օգտակար ցուցմունքները, Ձեր շունչն ու անձնաւորութիւնը մեզի համար եղախանդավառութիւն ու եռանդ, որով միայն մեզի կարելի զարձաւ մեր կրթական գործին մէջ ու նենայ համեստ այն նուստուս մը որ կը գտնէք մեր տեղեկագրին մէջ, Կ'ըսեմ այս բոլորը ոչ իրրև խօսքի կարգ կամ քաղաքավարական արտայայտութիւն մը, այլ անոնք որտազին արտայայտութիւններ են որոնք ձեռնուց կ'առնեն Ձեր իսկ անձին աղնուսութենէն, բարութենէն և հայրական բարձրոյն տրամադրութիւններէն:

Մեր և մեր աշակերտութեան և անոնց ծնողներուն երախտագիտութեան եւ շնորհակալութեան ամենախոր զգացումները կը ներկայացնեն հանդէպ Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն Ժողովին և Ս. Յակոբեանց Միարանութեան, որ հակառակ իրենց անտեսական շատ անձուկ վիճակին ոչինչ խնայեցին գաղութիւն փոխօրգային կրթական գործին: Կը զգանք թէ ինչ զոհողութիւններու զին միայն կրնայ ըլլալ մեր վարժարանի բարձր ընթացքը, համահասարայն օրբորուն ուր տեսեապէս շէն էր Սրբոց Յակոբեանց մեր Տունը: Ու ասոր համար գիտենք թէ մեր սիրելի Միարանութիւնը զոհեց շատ բան, իր հանդիսանէ, իր նրթակներէն, նոյնիսկ իր անունընէ, որպէսզի չի նուազի մեր կրթութեան ու լոյսի գործը:

Այժմ կը ներկայացնեմ Ձեր բարձր Սրբազնութեան Սրբոց Թարգմանչաց նախակրթարանի բաժնէն չրջանաւարտ մեր սաները, ստանալու համար իրենց վկայականները: Անոնցմէ վեցը՝ կը ստանան պատուոյ վկայական, 12ը՝ յաջողութեան, իսկ 14ը՝ պարզ վկայականներ:

Այս շրջանաւարտներէն կարե որ մաս մը յառաջիկայ տարի կը շարունակեն իրենց ուսումնական ընթացքը մեր վարժարանի 7րդ դասարանին մէջ:

Կը խնդրեմ Սրբազան Հայր, Ձեր օրհնութիւնը անոնց և մեզ բոլորիս:

Որդիական ջերմ սիրով,
Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աշին
Կիւրեղ ԱՐԵՂԱՅ ԳԱՐԻԿԵԱՆ

Տեսուչ Ս. Թարգմանչաց վարժարանի
13/7/54
Ս. Աթոռ — Երուսաղէմ